որպէս յառաջագոյն նշանակեցաք» (էջ 119), «որպէս ի վեր անդր պատմեցաք» (էջ 120), «որով օրինակաւ պատմեցաք» (էջ 138), «...զոր ինչ յանցեալ ճառիդ պատմեցաք» (էջ 144), «...թէ կանխաւ պատմեալ մեծ սովին և Ջալալոց պատճառէն» (էջ 147), «ըստ օրինակին որպէս և նախ պատմեցաք» (էջ 164), «որպէս և յառաջագոյն զամենայն որպիսութիւն պատմեցաք» (էջ 183), «վասն որոյ և յիշեցաք ի ճառի Սրապիոնին» (էջ 210), «և վարդապետն Պօղոս՝ որ ***ի վերայ պատմեցաք***» (էջ 287) և այլն:

Քանի որ Դավրիժեցու պատմագրքի աղբյուրները մեծ մասամբ բանավոր ծագում ունեն, և պատմիչը մեծ տեղ է տվել ականատեսների ու ականջալուր մարդկանց հաղորդած տեղեկություններին, ապա «Գիրք պատմութեանց»-ում իբրև կառուցվածքային կայուն միավորներ են դրսևորվում նաև ***ներբերվող այլտեքստերը, երբ պատմիչն առանց պատմողի անունը տալու ներբերում է տվյալ իրադարձությանը առնչվող պատմություն:*** Այս միավորները ծառայում են նաև իբրև պատմության հավաստիությունը ցուցանելուն միտված ճարտասանական հնարանքներ՝ իրենց կաղապարային տարրերով: ***«Ասեն»*** և ***«պատմէն»*** բառային միավորները, որոնք նաև զրույցի ժանրային ցուցիչներից են, հայտնվում են տարբեր, այսպես ասած՝ միջավայրերում, և այդ կերպ պատմիչը ցուցանում է, որ պատմություն է ներբերում, թեպետ, անշուշտ, ներբերվածները միշտ չէ, որ զրույցներ են: Ինչպես՝ «որպէս և պատմեն տեսողքն» (էջ 59), «Ասի ևս յոմանց թէ...» (էջ 102), «Այլ և ոմանք ասացին թէ» (էջ 113), «որ բազումք ի մերոց ազգացս վկայեցին» (էջ 131), «և այսմ խօսիցս ասողքն, ինքեանք իւրեանց աչօքն տեսեալ էին, և էին արք հաւատարիմք» (էջ 131), «և նա պատմեաց մեզ զպատմութիւնս զայս: Եւ զկնի ասաց՝ թէ...» (էջ 179), «Այլ և լուաք յոմանց թէ զայն ևս ասացեալ են...» (էջ 182), «Այլ և արք ոմանք ասացին...» (էջ 186), «զոր բազումք ասէին թէ...» (էջ 194) և այլն: